

ԵՐԿՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ատոմ Մարգարյան

Աշխատանքը վերաբերում է ՀՀ տնտեսական զարգացման առավել արդիական խնդիրներից մեկին՝ երկարաժամկետ հեռանկարում երկրի մրցունակության բարձրացմանը: Հիմնավորվել է ՀՀ տնտեսական աճի վերականգնման փուլի հիմնական ռեսուրսների սպառման թեզը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում անցում կատարել որակապես նոր մրցակցային առավելությունների ձևավորմանը: Որպես այդ խնդրի լուծման հիմնական միջոց առաջարկված է Ազգային նորարարական համակարգի (ԱՆՀ) ձևավորումը, որի գլխավոր խնդիրը պետք է լինի առաջիկա տասնամյակի ընթացքում կիսաարդյունաբերական կամ արդյունաբերական տնտեսությունից դեպի գիտատար կամ ինֆորմացիոն տնտեսության անցման ապահովումը: Առաջարկված են տարբերակներ՝ երկրի գիտատեխնիկական և տեխնոլոգիական ներուժի վերականգնման ու զարգացման, նորամուծությունների ներդրման ու առևտրականացման մրցունակ ենթակառուցվածքների ստեղծման, ինչպես նաև նորամուծություններին միտված արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականության ձևավորման առումով:

1. Ընդհանուր խնդրադրումներ

Հայաստանը վերջին տարիներին գտնվում է տնտեսական և քաղաքական կայունության փուլում, ինչը հնարավոր է դարձնում, եթե ոչ՝ պարտադրում միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության, ասել է թե՛ ռազմավարության մշակումը:

Սակայն, այստեղ ակնհայտ վեճեր կան:

Ակտիվ կառուցվածքային քաղաքականության կողմնակիցները, իրավացիորեն վկայակոչելով շուկայի ծախողումները, միաժամանակ փոխաբենը առաջարկում են, մեր կարծիքով՝ ոչ այնքան իրավացիորեն, շոշափելիորեն ավելացնել պետական միջամտությունը, մասնավորապես՝ ճյուղային արդյունաբերական քաղաքականությունում:

Տրամագծորեն հակադիր մոտեցումը նեոլիբերալ մոտեցումն է՝ հիմնված «Վաշինգտոնյան կոնսենսուսի» սկզբունքների վրա. այն է՝ պետք է հետազայում ևս ապավինել շուկայական ուժերի ազատ «խաղին»: Իբրև լուծում առաջարկվում է շուկայի հետագա ազատականացումը:

Այս երկու մոտեցումներն, իհարկե, ունեն ավելի շատ ընդհանրություններ, քան դրանք պատրաստ են ընդունել բանավիճող կողմերը: Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում ինստիտուտների դերը (առաջինի դեպքում՝ պետական կամ ուղղահայաց, երկրորդի դեպքում՝ շուկայական կամ

հորիզոնական) համարվում է վճռորոշ:

Այդուհանդերձ, նշված երկու տեսակետները, հատկապես գործնական քաղաքականության մեջ ներդրման առումով, բավականաչափ կասկածահարույց են, առաջին հերթին՝ վարվող տնտեսաքաղաքական ուղեգծի իրական փոփոխության անհրաժեշտության կամ ռեսուրսների բացակայության պատճառով: Արդյունքում՝ երկու մոտեցման կողմնակիցները ետ են կանգնում իրենց դիրքորոշումներից:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս կարելի է արագացնել ինստիտուտների զարգացման գործընթացը, այն հաշվով, որպեսզի ձևավորվի դրանց ուղղահայաց և հորիզոնական համակարգերի ցանկալի (օպտիմալ) կոմբինացիան: Ակնհայտ է, որ միայն այդ պահանջը բավարարող կառուցվածքը թույլ կտա ապահովել երկրի տնտեսության պատշաճ մրցունակությունը և միջազգային մասշտաբով նրա մրցակցային դիրքերի ամրապնդումը:

Սույն հոդվածի մեջ փորձ է արվում պատասխան տալ այս գլխավոր հարցին: Ընդհանուր խնդրադրման հիմքում երեք հիմնական ենթադրություն է դրված.

ա) շուկայի և պետության միասնացման ըմբռնում-ենթադրությունը, այսինքն՝ բարեփոխումների այնպիսի ծրագրային ռազմավարության իրականացումը, որը թույլ կտար միաժամանակ կայացնել և՛ շուկայական, և՛ պետական ինստիտուտները,

բ) գիտելիքների արդյունավետ օգտագործման ենթադրությունը, այսինքն՝ տնտեսական քաղաքականության ձևավորման և տեխնոլոգիական գիտելիքների նորանվթությունների միջոցով շուկայական տնտեսության անցումն ապահովելու համար: Ինստիտուցիոնալ փոփոխությունները, բնականաբար, ժամանակ են պահանջում: Եթե ճիշտ օգտագործվեն գիտելիքները, ապա հնարավոր է արագացնել փոփոխությունները: Գիտելիքների ստեղծումն, իհարկե, շատ ավելի թանկ է նստում, քան դրանց տարածումը կամ վերարտադրությունը: Եվ հենց գիտելիքների, այլ ոչ թե նյութական կապիտալի կամ բնական ռեսուրսների մեջ արված ներդրումները կարող են ապահովել բաղձալի այս վերափոխումը:

գ) ինստիտուցիոնալ նորանվթությունների ենթադրությունը տնտեսավարող սուբյեկտների միջև պարտավորությունների ձևակերպման կարգի հեշտացման վերաբերյալ: Որպեսզի հնարավոր լինի գիտելիքներին «հարկադրել աշխատել», դրանք դարձնել շուկայական պահանջարկ ունեցող «ապրանքներ», անհրաժեշտ է դրանք վերածել վարքագծի փոփոխության ազդակների (նորմերի), ոչ միայն առանձին անհատի, այլև՝ տնտեսավարող սուբյեկտի և ամբողջ հասարակության

համար: Խոսքը սոցիալական ուսուցման (տեխնոլոգիաների) մասին է, այն է՝ ինչպե՞ս սովորեցնել անհատներին և կազմակերպություններին՝ նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերման անհրաժեշտության մեջ համոզվելու ու այն ապրելակերպի նորմ դարձնելու համար:

Այլ կերպ՝ ՀՀ տնտեսական զարգացման օրակարգի թիվ մեկ խնդիրը գիտելիքների «ինդուստրիայի» զարգացումն է. սա՝ է մրցակցային շուկային անցման գլխավոր ծրագիրը: Շուկայական և տեխնոլոգիական գիտելիքների ստեղծագործական օգտագործումը ի վիճակի է հնարավոր դարձնել անցման շատ ու շատ խնդիրների լուծումը: Մյուս կողմից, առանց գիտելիքների «տնտեսության» պատշաճ զարգացման՝ անհնար կլինի ապահովել երկրի տնտեսական, հետևաբար և՛ ռազմաքաղաքական անվտանգության ցանկալի մակարդակը:

Ընդհանրապես, ռազմավարական զարգացման տարբերակները ենթակա են կառավարման միայն ընկերության միկրոմակարդակով, մինչդեռ մակրոտնտեսական մակարդակով դրանք ծրագրավորելը բարդ ու երբեմն անշնորհակալ գործ է: Ավելին, ընկերությունների մակարդակում առկա հիմնախնդիրները հնարավոր է հանգեցնել միջին օղակի հիմնախնդիրներին՝ արժեքի աճի շղթաների կամ «քլաստերների» տեսքով: Եվ միայն դրանցից հետո է հնարավոր անցում կատարել ընդհանուր տնտեսական քաղաքականության և ռազմավարության հիմնախնդիրների քննարկմանը:

Հոդվածի հիմքում դրված են երեք հիմնական դրույթներ.

1) Հայաստանը այժմ գտնվում է «ճամփաբաժանում»․ եթե բաց թողնվեն այսօր առկա աճի հնարավորությունները, ապա դրանք կկորսվեն առիավետ: Այս պայմաններում, պետության և մասնավոր հատվածի համատեղ «գործողությունների» անհրաժեշտությունը չգիտակցելու ու չգնահատելու պարագայում դա կարող է շատ թանկ արժենալ ապագա սերունդների համար:

2) Քաղաքական գործիչները այժմ ունեն ճիշտ ընտրություն կատարելու այլընտրանք: Մենք առաջարկում ենք միկրոմակարդակի վրա դիտարկել այդ այլընտրանքները ու ձևակերպել տարբերակները: Այնուհետև, դրանց հիման վրա անցում կատարել ընդհանուր տնտեսական այլընտրանքներին և ընտրել մրցակցային ռազմավարությունը:

3) Հաջորդ դրույթը առնչվում է կառավարության քաղաքականության տարբեր սցենարներին՝ հանձինս ապակարգավորման, հորիզոնական արդյունաբերական քաղաքականության, ճյուղային նախաձեռնություններին, ինչպես նաև ներքևից եկող ինստիտուցիոնալ նախաձեռնություններին:

2. Հնարավոր ռազմավարական այլընտրանքների համադրումը

Հայաստանը գտնվում է ճակատագրական ճամփաբաժանի սկզբին: Այս բանաձևումը բխում է հետևյալ նկատառումներից.

1) Փաստորեն սպառվում են ետճգնաժամային փուլի (1998-2002թթ) «վերականգնողական» տնտեսական աճի հնարավորությունները, քանի որ՝ ա) նախ՝ արտաքին արտոնյալ վարկային հատկացումները մոտենում են սահմանագծին. դրանք անվերջ չեն: Դրանք ինստիտուցիոնալ վարկեր են, որ տրվում են միջազգային ֆինանսական կառույցների և դոնորների կողմից՝ կառուցվածքային ինստիտուցիոնալ բարեփոխումներ անցկացնելու նպատակով, բ) հնացած տեխնոլոգիական հենքի վրա արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնումը և դրա հաշվին ներքին շուկայի պահանջարկի հիման վրա տնտեսական աճի ապահովումը բնական սահմաններ ունեն: Այդ հնարավորությունները ևս մոտ են սահմանագծին, գ) նույնը վերաբերում է ներմուծման փոխարինման վրա հիմնված տնտեսական աճի սահմանափակությանը: Կարծում ենք, որ այդ սահմանագիծը արդեն հատվել է:

2) Որակական լուրջ հեռանկար ունեցող ներդրումային որոշումները շարունակաբար հետաձգվում են: Ներդրումները գիտելիքների և նորագույն սարքավորումների մեջ կատարվում են չափազանց դանդաղ: Ընդ որում, ամբողջական մակրոտնտեսական առաջարկի կողմում հանդես եկող սահմանափակումները նաև ուժեղացնում են ամբողջական մակրոտնտեսական պահանջարկի սահմանափակումները:

3) Եթե նույնիսկ ընդունենք, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրը բարենպաստ է (ինչը մասամբ է այդպես), ապա ընկերությունները պետք է դրանից օգտվելու համապատասխան կարողություններ ունենան: Մինչդեռ ղեկավարման, ինստիտուցիոնալ հմտությունների ու գիտելիքների պակասը ակնհայտ է:

Ձեռնարկությունների վերակառուցումը մնում է բարդագույն պրոբլեմ, մինչդեռ անհրաժեշտ է նորովի աշխատել գլոբալ չափանիշներով կառուցվածքավորված շուկաների, նոր գործընկերների հետ: Այն մտայնությունը, թե կարելի է և պետք է վերականգնել նախկին ՍՀՄ շրջանակներում եղած արտադրական ու մատակարարման կապերը, իրավիճակի ոչ համարժեք գնահատման արգասիք է: Ընդ որում, հին հիմքի վրա գոյացած նոր ընկերությունների ղեկավարներին թվում է, թե առանց համապատասխան միջնորդ կառույցների, հնարավոր է հարմարվել նոր իրողություններին:

Կայուն զարգացման ռազմավարության իրականացման ճանա-

պարհին մեկ այլ լուրջ խնդիր մնում է *համակարգման* խնդիրը: Փաստորեն, իրական (կամ ակնկալվող) անորոշության և անբարենպաստ սպասումների պայմաններում արմատական նորամուծություններ պարունակող ներդրումները ՀՀ տնտեսության մեջ պահպանվում են ամենացածր մակարդակի վրա: Մյուս կողմից, ցանկալի ներդրումների բացակայությունը ամրացնում է բացասական կանխատեսումներն ու սպասումները: Այս պայմաններում, որևէ ներդրման շահութաբերությունը որոշվում է ընդհանուր տնտեսության վիճակով:

Նման իրավիճակը ներդրողներին սթափեցնող ազդանշան է տալիս, այն է՝ եթե ոչ ոք առաջին ներդրման քայլը չի անում, ոչինչ տեղի չի ունենում: Այսինքն՝ թեև բոլորը հաստատում են, թե ամեն ինչ նորմայի սահմաններում է, սակայն, ոչ ոք չի շտապում հենքային տեխնոլոգիաների վրա խարսխված ու գլոբալ չափանիշներով հեռանկարային ներդրումներ անել, բացառությամբ՝ առավելագույն լիկվիդայնության հատուկեմտ բնագավառների (առևտուր, ներքին սպառման, լայն սպառման ապրանքների արտադրություն, որոշ մենաշնորհային բնագավառներ, բնական մենաշնորհների ոլորտներ և այլն):

Եթե համադրենք վերը նշվածը, ապա կարելի է այսօրվա կացությունը բնորոշել իբրև «տեղում վազք»: Դա նշանակում է, որ հարաբերականորեն կայուն քաղաքատնտեսական միջավայրում անընդհատ հետաձգվում են ձեռնարկությունների տեխնոլոգիական արդիականացման, վերակառուցման և նորամուծային տնտեսական աճի քաղաքականությանն անցման որոշումները: Նման իրավիճակի հետագա շարունակությունը սպառնում է համաշխարհային տնտեսության և քաղաքականության ետնախորշերում Հայաստանի հայտնվելու վտանգով:

3. Գլոբալ զարգացման միտումները և մրցակցային մարտահրավերները

Ներկայիս աշխարհաքաղաքական ու հատկապես աշխարհատնտեսական զարգացումներն այնպիսին են, որ կամա թե ակամա աստիճանաբար թուլանում է համաշխարհային տնտեսության ավանդական միավորների՝ ազգային տնտեսությունների տնտեսական և, ինչու չէ՝ նաև քաղաքական կշիռը: Միջազգային տնտեսության մեջ այսօր տոն տվողները հզոր անդրազգային կորպորացիաներն են, որոնք, մի կողմից, ապավինելով այս կամ այն հզոր գերտերության պետական աջակցությանը, այդուհանդերձ, բիզնեսի վարման ու հատկապես մրցակցային ռազմավարությունների մշակման և իրականացման հարցում առաջնորդվում են առավելապես սեփական նախաձեռնու-

թյուններով ու ծրագրերով:

Գլոբալ զարգացման հաջորդ միտումը, որը, թերևս, ոչ պակաս կարևոր է, այն է, որ ժամանակակից գիտելիքների և նորագույն տեխնոլոգիաների զարգացումը էլ ավելի է խորացնում զարգացած ու զարգացող երկրների միջև խզումը: Ակնհայտ է դառնում, որ գլոբալացման պայմաններում հիմնական նորամուծային, ասել է թե՛ զարգացման ռեսուրսների առյուծի բաժինը կենտրոնացնում է խիստ փոքրաքանակ երկրներում: Արդեն 20-րդ դարի վերջին աշխարհի երկրների զարգացած տասնյակը տնօրինում է համաշխարհային նորամուծային ոլորտի 85%-ը (կիրառական գիտահետազոտական աշխատանքներ, փորձարարություն, տեխնոլոգիական նորույթների ներդրում և այլն): Փաստորեն, համաշխարհային տնտեսության մեջ ձևավորվել է երկու հարթություն. առաջին՝ «գիտելիքների արդյունաբերությունը» ներկայացնող շատ սահմանափակ թվով, ըստ էության՝ թելադրող տնտեսություններ, երկրորդ՝ առաջիններից կախյալ ու նրանց ետևից շարունակաբար «քարշ եկող» տնտեսություններ:

Ակնհայտ է, որ համաշխարհային տնտեսությունը գնալով ավելի ու ավելի համապարփակ է դառնում: Ազգային տնտեսությունների զարգացման գրավականն, ըստ այդմ, դառնում է միջազգային շուկաներին առավելագույնս ինտեգրումն ու դրա հաշվին զարգացման պարտադրանքներին համարժեքորեն արձագանքումը: Նախընթաց տասնամյակում ինֆորմացիոն տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հանգեցրել է նրան, որ միջազգային շուկաները դարձել են ավելի թափանցիկ ու մատչելի, միևնույն ժամանակ էլ ավելի են խստացել մրցակցության պայմաններն ու ինտենսիվությունը:

Ջարգացած երկրների խոշոր անդրազգային կորպորացիաները, բնականաբար, արագորեն հարմարվում են նոր իրողություններին, շատ դեպքերում իրենք են հարուցում և ուղղորդում նոր զարգացումները, աշխատում են հնարավորինս արագ ձերբազատվել անարդյունավետ ու զարգացումը կաշկանդող կառուցվածքներից, ձգտում են իրենց արտադրություններն ու ծառայությունների մատուցման բնագավառները դարձնել առավել ճկուն, դինամիկ և, որ ամենակարևորն է՝ հիմնված նորամուծությունների և շարունակական նորացման վրա:

Այս հանգամանքներն, անկասկած, ազդում են երրորդ աշխարհի ու հատկապես անցումային փուլում գտնվող երկրների զարգացման վրա: Հայաստանն այդ երկրների թվում է: Ջարգացած երկրներում տեղի ունեցող վերոնշյալ գործընթացները անցումային երկրներում, այդ թվում և Հայաստանում, առաջ են բերում նոր հնարավորություններ՝ մեր տնտեսության հնացած արտադրական, տեխնոլոգիական,

կազմակերպական և ինստիտուցիոնալ կառուցվածքները նորացնելու ու ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Մեր կարծիքով, համաշխարհային տնտեսության գլոբալացումը մի շարք նոր իրողություններ է ծնում, որոնց պահանջների հետ հաշվի չնստելը պարզապես խելամիտ չէր լինի: Գլոբալացման ակնառու իրողություններից մեկը նորագույն տեխնոլոգիաների հենքի վրա աշխարհի երկրների հետագա տարբերակումն է: Ըստ այդմ՝ զարգացած ու առաջատար երկրների ընտրանին, օգտագործելով գիտական ու ինժեներական մտքի նվաճումները, տեխնոլոգիապես էլ ավելի առաջ է անցնում աշխարհի մնացած հատվածից: Ակնհայտ է դառնում, որ աշխարհի զարգացած երկրներն ու անդրազգային ընկերությունները ներկայումս կարողանում են «սանձել» բարձրակարգ տեխնոլոգիաները, ինչը թույլ է տալիս իրենց հսկողության տակ վերցնել դրանց հիման վրա ձևավորված ապրանքային շուկաները:

Համաշխարհային շուկայի գլոբալացումը, թերևս, առավել լուրջ մարտահրավերն է տարածքով ոչ մեծ, բազային ռեսուրսներով և էներգակիրներով ոչ հարուստ, փոքրաքանակ բնակչությամբ, հետևաբար և սահմանափակ ներքին շուկա ունեցող այնպիսի երկրների համար, ինչպիսին, օրինակ, Հայաստանն է: Այդ պայմաններում, անհմաստ են դառնում ինքնաբավ ու ինքնապարփակ տնտեսության գոյության մասին բոլոր փաստարկները: Ավելորդ է ասել, որ նման զարգացումը փակուղային է. դա պարզապես կհանգեցնի խորհրդային ժամանակներից ժառանգված տնտեսության հնացած ու անմրցունակ տեխնոլոգիական կառուցվածքի կոնսերվացման, ու, իբրև հետևանք, կխորացնի աղքատությունը և հետամնացությունը, կփակի առաջադիմության ճանապարհը:

Համաշխարհային տնտեսության ներկա զարգացումներն այնպիսին են, որ հստակ առանձնանում են տնտեսության չորս խումբ՝ ճյուղեր, որոնք տարբերվում են բնակչության զբաղվածության և եկամուտների ձևավորման մեջ ունեցած տեղով, պահանջվող ռեսուրսների ու կիրառվող տեխնոլոգիաների յուրահատկությամբ, ինչպես նաև բնության վրա ունեցած «ճնշման» աստիճանով: Դրանք են՝

- հումք արդյունահանող և դրա նախնական մշակմամբ զբաղվող ճյուղերը,
- ծանր արդյունաբերությունը՝ հիմնված նյութատար, էներգատար և աշխատատար արտադրությունների վրա, որոնք աչքի են ընկնում բնական միջավայրի վրա լուրջ բացասական ազդեցությամբ,
- «բարձր տեխնոլոգիաների» վրա հիմնված արտադրությունները,

որոնց բնորոշ է բարձր աստիճանի գիտատարությունը, ցածր նյութա-, էներգա- և աշխատատարությունը, ինչպես նաև՝ բնության վրա թույլ ներգործությունը,

- «փափուկ» տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունները, որոնց հիմքում ինֆորմացիոն տեխնոլոգիաներն են (ծրագրային ապահովում, համակարգային ինտեգրացիա, բիզնես-խորհրդատվություն, աուտսորսինգ, ուսուցում և այլն):

Համաշխարհային տնտեսության մեջ ներկայում ընթացող նման կառուցվածքային տեղաշարժերի պայմաններում տեղի է ունենում ծանր արդյունաբերության հուճքատար, էներգատար, աշխատատար և բնապահպանական տեսանկյունից վտանգավոր արտադրությունների փոխանցում զարգացած երկրներից զարգացող երկրներին: Այդ գործընթացին նպաստում է ինչպես թույլ զարգացած երկրների աշխատուժի ցածր արժեքը, այնպես էլ՝ մրցակցության ինտենսիվությունը: Մյուս կողմից, տեղի է ունենում «ուղեղների արտահոսք» զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ: Այս գործընթացները որոշակի առումով նաև բնորոշ են Հայաստանին:

Մյուս կողմից, այն երկրները, որոնք կրթված բնակչություն և զարգացած մտավոր ներուժ ունեն, կարող են միջազգային շուկաներում ունենալ իրենց կայուն տեղը շնորհիվ «փափուկ» տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված ապրանքների արտահանման: Այս երկրների հիմնական խնդիրը հենց մարդկային կապիտալի զարգացման ու ընդլայնված վերարտադրության համար առավելագույնս բարենպաստ պայմաններ ստեղծելն է: Մեր կարծիքով, նման սցենարը որոշակի իմաստով, «բարձր տեխնոլոգիաների» զարգացման փուլը շրջանցելու այլընտրանքներից մեկն է: Հայաստանի համար բարձր տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ կարող է նախընտրելի լինել նաև տեխնոլոգիաների այս խմբի զարգացման սցենարը:

4. Ազգային նորարարական համակարգի ձևավորումը իրև ելք իրավիճակից

Հայաստանի Հանրապետություն անկախացումը օրակարգի հարց է դարձրել *ազգային նորարարական համակարգի (ԱՆՀ)* ստեղծումը, քանզի առանց դրա՝ անհնաստ է խոսել քիչ թե շատ տևական հեռանկարում միջազգային չափանիշներով մրցունակ տնտեսություն ունենալու մասին: Փաստը մնում է փաստ, որ ՀՀ-ում առայժմ շատ մեծ է խզումը երկրի՝ համեմատաբար մեծ գիտատեխնոլոգիական ու նորարարական ներուժի և նրա իրացման ծայրահեղ ցածր մակարդակի միջև: Հաշվի առնելով այս հանգամանքը, *ազգային նորարարական համակարգի գլխավոր խնդիրը պետք է հանգի կիսաարդյու-*

նաբերական կամ արդյունաբերական տնտեսությունից դեպի գիտատար կամ ինֆորմացիոն տնտեսության անցման ապահովմանը:

Զարգացած երկրների նորարարական համակարգերը բնութագրվում են գիտելիքների ստեղծման, տարածման և օգտագործման բնագավառում պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ: Առաջատար երկրների ԱՆՅ-երը նրանց դիմամիկ ու աճի կայունությամբ բնութագրվող տնտեսությունների զարգացման որոշիչ բաղադրիչներից են: Որպես այդպիսին՝ ԱՆՅ-երը միասնական խնդիր են լուծում՝ ապահովել նորարարությունների (innovation) շարունակականությունը, ասել է թե՛ մրցակցային առավելությունների կենսունակությունը:

Այդուհանդերձ, այդ երկրների ԱՆՅ վերաբերյալ միասնական սահմանում գոյություն չունի: Յուրաքանչյուր երկիր իր ԱՆՅ ձևավորմամբ, իր համար առաջնահերթ խնդիրների որոշակի շրջանակ է լուծում: Ասենք, Ֆրանսիայում իբրև այդպիսին դիտվում է առավելապես հավելյալ աշխատատեղերի ստեղծումը, Գերմանիայում՝ նորագույն տեխնոլոգիաների յուրացումը, ինչպես նաև բնապահպանական հիմնախնդիրների լուծումը, ԱՄՆ-ում՝ պետական ֆինանսավորմամբ հետազոտությունների և մշակումների արդյունքների իրավական հուսալի պաշտպանությունը, միաժամանակ՝ տնտեսության ռազմական հատվածից նորույթների փոխանցումը դեպի քաղաքացիական տնտեսության հատված և այլն [1]:

Բոլոր դեպքերում ԱՆՅ ձևավորման և զարգացման ռազմավարությունը բազմաթիվ գործոնների համադրում է ենթադրում: Առաջին հերթին, իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել երկրի տնտեսության պատմականորեն անցած «հետագիծը», մարդկային ռեսուրսների որակը: Ակնհայտ է, որ Հայաստանի տեխնոլոգիական «ճեղքվածքը» զարգացած երկրների նկատմամբ է՛լ ավելի կիտրանա, եթե չիրականացվեն այնպիսի ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք ամրապնդեն ձևավորվող նորարարական ենթակառուցվածքի, գիտության բնագավառի և ներքին շուկայի զարգացման միջև սերտ կապերը: Ակնբախ է նաև, որ նոր ձևավորվող տնտեսության մասնավոր հատվածը, չունենալով սեփական հետազոտական և փորձարարական բազա, գրեթե կտրված է հիմնականում պետական կարգավիճակ ունեցող ակադեմիական, ճյուղային և համալսարանական (բուհական) գիտությունից, ինչն էլ նրան անմրցունակության է դատապարտում:

Սինչդեռ զարգացած երկրների փորձը հուշում է, որ իննովացիոն-տեխնոլոգիական հետամնացության հաղթահարումը ենթադրում է առաջին հերթին բարձր շուկայական ռիսկերի նվազեցում, ինչի շնորհիվ կխթանվեն տեխնոլոգիական նորույթների առևտրականա-

ցումը և փոքր նորարարական ընկերությունների հիմնումը: Նման երկրների (Ֆրանսիա, Իսրայել, Ֆինլանդիա, Չարավային Կորեա և այլն) փորձը նաև հաստատում է, որ նորամուծությունների բնագավառի պետական աջակցության համակարգը ամենևին չպետք է լինի համընդգրկուն և հանդես գա խոշորամասշտաբ կառուցվածքների տեսքով: Պետությունը պետք է միայն խնդիր ունենա օժանդակել մասնավոր կառույցների մշակած ծրագրերին, որոնք ենթակա են գնահատման, կարգավորման և բաղդատման:

Գիտելիքների և բարձր տեխնոլոգիաների արդյունավետ ներդրման նպատակով անհրաժեշտ է ունենալ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության կայուն և հուսալի համակարգ: Հայաստանի Հանրապետությունը լուրջ քայլեր է արել մտավոր սեփականության համակարգի պաշտպանության օրենսդրությունը միջազգային չափանիշներին մոտեցնելու ուղղությամբ: Այս հարցում, անշուշտ, էական դեր է խաղացել Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը ՀՀ անդամակցության գործընթացը: Այդուհանդերձ, լրջագույն խնդիր է մնում այդ իրավունքների պաշտպանության հուսալի մեխանիզմների ստեղծումը:

Մեր կարծիքով, առանց նման մեխանիզմների առկայության, այդ բնագավառ լուրջ ներդրումների ներհոսք անհնար է ակնկալել: Թեև, մեկ շնչի հաշվով տրվող արտոնագրերի քանակությամբ մեր երկիրը ամենևին էլ ցածր ցուցանիշներ չունի (100 հազ. բնակչի հաշվով՝ 10,7 արտոնագիր¹, սակայն այդ արտոնագրերի օգտագործման և հատկապես բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման առումով Հայաստանի ցուցանիշները շատ ցածր են: ՀՀ բարձրտեխնոլոգիական արտադրանքի բաժինը երկրի ընդհանուր արտահանման կառուցվածքում կազմում է ընդամենը 2% [2], մինչդեռ, ըստ Եվրոպական միության չափանիշների՝ այդ ցուցանիշը պետք է լինի առնվազն 6,5% [3]: Ասել կուզի, որ պատենտունակ մշակումները այդպես էլ չեն առևտրականանում, չեն դառնում մրցունակ տեխնոլոգիաներ, ապրանքներ և ծառայություններ:

Այսօր ինչպես պետական ու մասնավոր կառույցների, այնպես էլ գիտական ու հետազոտական շրջանակների ներկայացուցիչների կողմից միանշանակորեն ընդունվում է, որ առանց մրցունակ ապրանքների և ծառայությունների վրա հիմնված բազմազանեցված արտահանման՝ անհնար կլինի լուծել երկրի տնտեսական զարգացման ու ազգամյակության բարձր բարեկեցության ապահովման խնդիրը:

¹ Հաշվարկը՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր Արտոնագրային վարչության (ներկայումս՝ ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության գործակալություն) 1993-2001թթ. տարեկան հաշվետվությունների:

Սակայն, նման ճիշտ նպատակադրումը չի ուղեկցվում դրան հասնելու միջոցների և լուծման ուղիների վկայակոչումներով: Մեր կարծիքով, նման արտահանումներ ունենալու համար, նախ և առաջ, հարկավոր է ունենալ գիտական ու տեխնոլոգիական նորույթների ներդրման-առևտրականացման հուսալի ազգային համակարգ:

ՀՀ ձեռնարկատիրության բնագավառի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործարար մարդիկ շատ իներտ են նորամուծությունների հարցում, հակված չեն շարունակաբար նորացնել արտադրանքը, տեխնոլոգիաները, և գրեթե զուրկ են գիտահետազոտական կազմակերպությունների հետ ունեցած կապերից, միևնույն ժամանակ, չեն շտապում զարգացնել սեփական հետազոտական և փորձարարական կառույցները: Այլ կերպ ասած՝ նրանց մոտ շատ փոքր է ռիսկի դիմելու ցանկությունը: Նրանք նաև չեն կամենում ձեռք բերել ու մշակել նորագույն նորարարական տեղեկատվությունը, արդյունավետ կապեր հաստատել գիտահետազոտական և փորձնակոնստրուկտորական կառույցների, խորհրդատվական և լիզինգային ընկերությունների հետ, նորացնել ու թարմացնել իրենց աշխատակազմերի գիտելիքներն ու կարողությունները:

Մյուս կողմից, քիչ թե շատ խոշոր ձեռնարկատիրությունները չեն շտապում նորացնել իրենց արտադրությունները ի հաշիվ արտասահմանյան նորագույն տեխնոլոգիաների: Նրանց մեծամասնությունը գերադասում է ծախսեր անել նոր սարքավորումների գնման վրա, քան ձեռք բերել «նոու-հաուսներ» ու դրանց հիման վրա մշակել սեփական տեխնոլոգիաները: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը նորարարության բնագավառում թերզարգացած է, քանի որ խոշոր ընկերությունները բավարար պահանջարկ չեն ներկայացնում տեխնոլոգիական նորույթների նկատմամբ, պետության քայլերն էլ այդ ուղղությամբ պարզապես անբավարար են:

Նորարարական ձեռնարկատիրության թույլ գործընթացների պատճառներից մեկն էլ մասնավորեցման ոչ հետևողական և ոչ օպտիմալ մեխանիզմների ներդրումն է: Փաստորեն, առ այսօր արդյունավետ սեփականատիրոջ ինստիտուտի ձևավորումը մնում է օրակարգում, չնայած արդեն մասնավոր է տնտեսության 75-80%-ը: Դրա պատճառը հստակ օրենսդրության, առաջին հերթին՝ սնանկացման մեխանիզմների անկատարությունն է:

Գիտության և տեխնոլոգիաների ու արդիական իննովացիոն համակարգի միջոցով տնտեսության զարգացման հիրավի ահռելի թռիչք իրականացրած երկրներից հատկապես ուսանելի են Ֆինլանդիայի և Իսրայելի օրինակները: 35-40 տարվա ընթացքում այդ երկրներից յուրաքանչյուրը հետամնաց վիճակից դարձավ աշխարհի

ամենաբարեկեցիկ երկրներից մեկը: Այսպես, 60-ական թվականների սկզբներին ֆիննական արտահանման 70%-ը փայտանյութն էր և նրանից մշակվածքները, Իսրայելի արտահանման 70%-ը գյուղատնտեսական վերամշակված արտադրանքն էր: Ներկայումս այդ երկու երկրների արտահանման կառուցվածքի 50%-ից ավելին բարձր տեխնոլոգիական արտադրանքն է [4]:

Այդ երկրներում նման արդյունքների հնարավոր եղավ հասնել նորամուծությունների խթանմանն ուղղված հստակ ազգային ռազմավարության իրականացման միջոցով: Ընդ որում՝ այդ երկրների ելակետային պայմանները (թերզարգացած արդյունաբերություն և գիտատեխնիկական ոլորտներ) ավելի վատն էին, քան, ասենք, Հայաստանում: ՀՀ-ում լճացած ու հնացած վիճակում գտնվող արդյունաբերական պոտենցիալը զուգակցվում է կրթական և գիտական զարգացած ներուժի կամ նրա վերարտադրության առկայության հետ (գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ունակություն, տեխնիկապես գրագետ աշխատուժի և ինժեներական կադրերի առկայություն, հետազոտական ենթակառուցվածքների ցանց, կրթական զարգացած ենթակառուցվածք և այլն): Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաղթահարել անցյալի ծանր ժառանգությունը՝ ինստիտուցիոնալ անճկունությունը և անարդյունավետ կազմակերպական համակարգը:

Առայժմ ՀՀ գիտատեխնիկական ռեսուրսների զգալի մասը մեկուսացած վիճակում է ինչպես դրանց կառավարման (բյուրոկրատական ժառանգության բերումով), այնպես էլ ֆունկցիոնալ առումով, երբ գիտահետազոտական կառույցների առաջարկը մեծապես ետ է մնում դրանց նկատմամբ տեղական և արտասահմանյան ընկերությունների ներկայացրած պահանջարկից:

Վերը շարադրված կացությունը և երկրի տնտեսական զարգացման խնդիրները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ապահովել տնտեսության աստիճանական անցումը *նորամուծությունների ռեժիմի*: Դրա համար, մեր կարծիքով, նախ անհրաժեշտ է իրականացնել գիտության բնագավառի վերափոխման հետևյալ քայլերը՝ ա) ավելացնել հիմնարար և կիրառական հետազոտությունների պետական բյուջետային ֆինանսավորումը՝ դրանք հասցնելով պետական ծախսերի առնվազն 3.5-4%-ին, ը) առավել մեծ գումարներ տրամադրել կիրառական հետազոտությունների ֆինանսավորմանը, գ) գույքագրել առկա ողջ «գիտատեխնիկական» պաշարն ու դրանք դասակարգել ըստ «իրացման աստիճանի», դ) օգտագործելով միջազգային հարուստ փորձը՝ քայլեր ձեռնարկել գիտության, կրթության և արտադրության բնագավառների միասնացման ուղղությամբ:

Գիտական և տեխնոլոգիական մշակումների առևտրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ նպատակահարմար է իրականացնել հետևյալ քայլերը.

- ձևավորել ու զարգացնել վեճաբարձար ֆինանսավորման պետական մեխանիզմները,
- զարգացնել նորամուծային բարձր ռիսկերի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ապահովագրության համակարգերը,
- խթանել նորամուծային բիզնեսի զարգացումը արդիական նորարարական ենթակառուցվածքների միջոցով (ինկուբատորներ, տեխնոպարկեր, ճարտարագիտական, խորհրդատվական ընկերություններ և այլն),
- վերականգնել արտաբյուջետային հիմնադրամների դերը տարբեր գիտատեխնոլոգիական ծրագրերի ֆինանսավորման հարցում,
- զարգացնել նորամուծությունների ղեկավարման համակարգը, և այլն:

Այսօր երկրները ձգտում են կողմնորոշվել բնույթով երկակի խնդրի լուծման հարցում. կա՛մ ձգտել դառնալ հիմնարար և կիրառական գիտության բնագավառի համաշխարհային արտադրող, կա՛մ էլ փորձել հիմնական շեշտը դնել կիրառական գիտելիքների առևտրականացման կամ ներդրման վրա: Հայաստանի վերաբերմամբ, մեր կարծիքով, տվյալ խնդրադրումը այսպիսին պետք է լինի. երկիրը իր գիտահետազոտական ներուժը պետք է օգտագործի բացառապես սեփական տնտեսությունը նորագույն տեխնոլոգիաներով զինելու, թե՞ դրանք գերազանցապես արտահանելու համար:

Թվում է, թե Հայաստանում վերջին 6-7 տարիներին գրանցված անընդհատ տնտեսական աճի պայմաններում մեծ հնարավորություններ կան տնտեսությունը արագորեն նորամուծային ռեժիմի փոխադրելու և այդ հարցում գիտատեխնիկական ու ճարտարագիտական ներուժը ինտենսիվորեն օգտագործելու ուղղությամբ: Սակայն, մեր կարծիքով, դա այդպես չէ: Չնայած լուրջ տնտեսական աճին, առայժմ ներքին շուկայում կիրառական գիտական արդյունքի նկատմամբ պահանջարկը խիստ թույլ է: Բազմաթիվ հայկական մասնավոր ձեռնարկություններ սեփական միջոցներ չունեն ոչ միայն սեփական հետազոտություններն անցկացնելու, այլև, նույնիսկ, արտադրության արդիականացման համար անհրաժեշտ նոր տեխնիկա գնելու համար: Այդ պատճառով, պետք է ենթադրել, որ գիտատեխնոլոգիական մշակումների նկատմամբ պահանջարկը ձևավորող գործոնները առաջին հերթին կարող են հարուցվել արտաքին շուկայի կողմից:

Իսկ նման պահանջարկածին ազդակները կարող են առաջ գալ միջազգային այնպիսի հայտնի ընկերությունների հետ ռազմավա-

րական գործընկերության ընթացքում, որոնք ի վիճակի են ապահովել համապատասխան պատվերներ: Այս առումով, գիտության թեմատիկ ֆինանսավորման համակարգի զարգացումը ռեալ երաշխիք է, որպեսզի այս կամ այն թեմայի շրջանակներում աշխատող գիտնականը կամ գիտական կոլեկտիվը համապատասխան արտասահմանյան գործընկեր գտնի:

Իհարկե, այս պնդումը չի նշանակում, որ պետք է հրաժարվել այլընտրանքից, այն է՝ անտեսել գիտական արդյունքի նկատմամբ ներքին պահանջարկի գործոնը: Ընդհակառակը. հիմնավորված առաջարկների դեպքում, մեր կարծիքով, անհրաժեշտ է դրանք ֆինանսավորել պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Բարձրտեխնոլոգիական ընկերությունները, որպես կանոն, չեն կարող զարգանալ իբրև մեկուսի կառույցներ: Դրանք հաջողությամբ զարգանում են միայն իբրև ազգային, տարածաշրջանային կամ գլոբալ հիերարխիկ շղթայի օրգանական բաղադրիչներ: Այս կապերի հաստատումն ու ամրապնդումը ենթադրում է առնվազն երկու գործոնի առկայություն. *առաջին*՝ խոշոր կամ միջին արդյունաբերական ձեռնարկությունների առկայություն, որոնք ի վիճակի են արտադրել մեծ ծավալի հավելյալ արժեքներ: Այս առումով, մեր պայմաններում կարող է շահեկան լինել ինտեգրացված ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծումը, որոնք կարող են միջոցներ գտնել նաև նորամուծությունների համար՝ իրենց ներքին կառուցվածքային միավորների միջև կիսելով դրանց ռիսկերը: Այս առումով, Հայաստանի տնտեսության զարգացման համար օպտիմալ կլինի երկրի համեմատական առավելությունների վրա հիմնված մեկ տասնյակ ավանգարդային ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծումը, որոնք կարող են ակտիվ դերակատարություն ունենալ ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային տնտեսությունների մակարդակով [5]:

Երկրորդ, ձեռնարկությունների ղեկավարների այնպիսի խմբերի առկայություն, որոնք գիտակցում են համաշխարհային տնտեսության արժեքային շղթաներին ինտեգրվելու նշանակությունն ու ձգտում են այդ աստիճանակարգում որքան հնարավոր է ավելի բարձր հարթակ զբաղեցնել:

Նշված երկու հանգամանքներն էլ, փաստորեն, բացակայում են ՀՀ տնտեսության մեջ: Այսինքն՝ չկա միջազգային չափանիշներով մրցունակ այն ընկերությունների միջուկը, որն ի վիճակի է նույնիսկ մրցել միջազգային չափանիշներով նմանակված տեխնոլոգիայի հիման վրա արտադրանք տվող ընկերությունների հետ: Բացի այդ, մեր կառավարիչների գերակշիռ մասը ի վիճակի չէ գնահատել հավելյալ

արժեքի միջազգային շղթաները, առավել ևս՝ չի ձգտում հարել դրանց: Այսօր Հայաստանում շատ քիչ են միջազգային խոշոր ընկերությունների մասնաճյուղերը (ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում գործող որոշ ընկերություններ դեռևս եղանակ չեն ստեղծում):

Ինչ վերաբերում է փոքրաթիվ նորարարական ընկերություններին, որոնք հակված են իրենց արտադրանքը արտահանել ոչ բարձրակարգ շուկաներ, ասենք՝ ԱՊՀ կամ երրորդ աշխարհի երկրներ, ապա նման հավակնությունները ինչ-որ տեղ հասկանալի են. այսպիսի ընկերությունների արտադրանքի որակը կազմում է լավագույն արտասահմանյան նմանակների որակի 70-80%-ը, մինչդեռ գինը՝ նրանց գնի 30-40%-ը:

Այդ պատճառով, նման շուկաներում քիչ թե շատ տևական ժամանակահատվածում մնալու հավանականությունը մեծ է: Այս առումով, տիպական կարելի է համարել հայկական «Մշակ» ՍՊԸ-ն, որի 10-ամյա գործունեության վերլուծությունը լրիվ համապատասխանում է վերը շարադրված իրողություններին: «Մշակը» թվային դեկավարման հաստոցների ավտոմատ սարքերի և արդյունաբերական էլեկտրոնիկայի նախագծման և արտադրության այն ընկերություններից է, որն ամուր դիրքեր ունի, առաջին հերթին, ԱՊՀ շուկաներում, նաև՝ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում՝ Իրանում, Սիրիայում, Լիբանանում: Միևնույն ժամանակ, նա իր արտադրանքն արտահանում է նաև բարձրակարգ տեխնոլոգիաների բնագավառի՝ միջազգային չափանիշներով առաջատար համարվող երկրներ, ասենք՝ ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգում տեղաբաշխված, այսպես կոչված՝ «սիլիկոնային հովիտ» [6]:

Ընդամենը 140 աշխատող ունեցող այս միջին մեծության ընկերությունը, զարգացման ու իր շուկաների ընդլայնման խնդիրները լուծելու համար, ֆինանսական միջոցների կարիք ունի: «Մշակը» 2001թ. մայիսին Նյու Յորքում կայացած միջազգային ներդրումային համաժողովին ներկայացրել էր բիզնես-ծրագիր, որով պոտենցիալ ներդրողներին առաջարկվում էր \$9.3 մլն. ներդրմամբ ընկերության բազայի վրա տեխնոլոգիական նորարարական կենտրոն հիմնել: Սակայն, արտաքին ներդրողները հետաքրքրություն չդրսևորեցին այդ ծրագրի նկատմամբ: Սա ՀՀ տնտեսության համար տիպական վիճակ է. բարձրտեխնոլոգիական ընկերությունը շուկաներ ունի, սակայն ֆինանսական ռեսուրսներ չունի իր արտադրությունն ընդլայնելու համար: Հայաստանյան բանկերի վարկերով հնարավոր չէ դա անել՝ տոկոսները շատ բարձր են: Նման վարկերով անհնար է մրցել միջազգային բարձրտեխնոլոգիական հսկաների հետ: «Մշակի» օրինակը ուսանելի է ու խոսում:

Փաստորեն, ստեղծվել է «արատավոր փակ շրջան», երբ միջազգային ճանաչում ունեցող ներդրումային կամ վեցնչության ընկերությունները բավարար հետաքրքրություն չեն դրսևորում հայաստանյան բարձրտեխնոլոգիական մշակումների նկատմամբ, մյուս կողմից, վերջիններս չեն ներդրվում-առևտրականանում, քանի որ դրա համար բավարար ֆինանսավորում չկա: Ո՞րն է ելքը:

Մեր կարծիքով, այս հարցում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը, այլապես անհնար կլինի տնտեսությունը «ներդրումային ռեժիմից» փոխադրել «նորամուծությունների ռեժիմի»: Պետական նորամուծային քաղաքականության հիմնական նպատակները պետք է հանդիսանան՝

- նորամուծությունների ոլորտի ռացիոնալ գերակայությունների ընտրությունը և պետական քաղաքականության մեջ նրանց ամրագրումը,
- նորարարական գործունեության համար անհրաժեշտ բարենպաստ ներդրումային, ֆինանսական և ինստիտուցիոնալ պայմանների ստեղծումը,
- նորարարական ձեռնարկատիրության համար անհրաժեշտ կադրերի պատրաստման ու վերապատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը,
- արտադրանքի, սպառման և բնապահպանության համաշխարհային ստանդարտների ներդրումը և այլն [7]:

Տնտեսությունը նորամուծությունների ռեժիմի փոխադրելու *հիմնական քայլերը* պետք է լինեն՝ ա) տնտեսության մեջ արդեն այս պահին առկա մրցունակ տեխնոլոգիաների հենքի վրա ձևավորված արտադրությունների շուկաների ամրապնդումը և ընդլայնումը, բ) նորամուծությունների ներդրումը պետք է ուղղված լինի առավելապես ռեսուրսախնայողության ապահովմանը, գ) գիտատեխնիկական ներուժի ամրապնդումը, դ) նորամուծությունների ներդրումը խրախուսող ենթակառուցվածքների ստեղծումը և այլն:

Մեր կարծիքով, նորամուծությունների պետական քաղաքականության մեջ անհրաժեշտ է ուժեղացնել բարձր տեխնոլոգիաների ասպարեզում ներհանրապետական կոոպերացիայի խրախուսման դերը: Բացի այդ, պետությունը կարող է առաջնահերթ կարգով խրախուսել հայրենական բարձրտեխնոլոգիական արդյունքների, ասենք՝ ծրագրային ապահովման միջոցների առուծախը ներքին շուկայում այդ գործարքները հարկելով ավելի մեղմ հարկային ռեժիմով:

Պետության կողմից նորամուծությունների օժանդակությամբ միտ-

ված քաղաքականության առավել կարևոր ուղղությունները, մեր կարծիքով, պետք է լինեն.

- բարձրտեխնոլոգիական նախագծերի ռիսկային ֆինանսավորման համակարգի ձևավորումն ու զարգացումը: Պետության կողմից ռիսկային ֆինանսավորման ուղղությամբ քայլերը պետք է արվեն այնքան ժամանակ, քանի դեռ այդ բնագավառի նկատմամբ մասնավոր բիզնեսը չի դրսևորել իր հետաքրքրությունը [8],
- նորամուծությունների համակարգի ռիսկերի ապահովագրման պետական և մասնավոր համակարգերի ձևավորումը և զարգացումը, ֆինանսաարդյունաբերական խմբերի կամ հոլդինգների շրջանակներում ստեղծումը այդ նպատակին ուղղված ապահովագրական կառույցների, որոնք կարող են կիսել ներդրումային ռիսկերը պետության, առևտրային և հատուկ մասնագիտացված կառույցների հետ,
- ինժեներինգի, կանխատեսման և գիտատար արդյունքների ու բարձր տեխնոլոգիաների վաճառքի ժամանակակից մարքեթինգային մեթոդներին տիրապետող ընկերությունների առաջացման պետական օժանդակությունը,
- փոքր և միջին նորարարական ձեռնարկատիրության կառույցների առաջացման պետական օժանդակությունը (ենթակառուցվածքային համակարգի ստեղծում, հարկային, վարկային արտոնություններ և այլն):

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նոր տեխնոլոգիաների մշակումները անցումային երկրներում, սկսած կիրառական հետազոտությունների փուլից մինչև դրանց մուշտրինակների կառուցումը, իրականացվում են հատուկ մասնագիտացված առևտրային կառույցների՝ տեխնոպարկերի և տեխնոլոգիական ինկուբատորների միջոցով: Այդ փորձը հուշում է, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտում, սկսնակ ընկերությունները սովորական շուկայական միջավայրում պարզապես չեն կարողանում գոյատևել: Դրանց համար արտոնյալ պայմաններ են պետք, ինչը պետք է երաշխավորի պետությունը:

Ինկուբատորում կամ տեխնոպարկում գործող ընկերությունը, այդպիսով, քիչ է ենթակա շուկայական ուժերի հզոր ճնշմանը: Այս տեսանկյունից Հայաստանում, կարելի է ասել, որոշ դրական փորձ արդեն կուտակվում է: Խոսքը «Վիասֆեր» (Viasfere) տեխնոպարկի մասին է, որը ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Սան Խոսե բնակավայրում տեղաբաշխված հանրահայտ Viasfere Internationale ընկերության հայաստանյան մասնաճյուղն է:

Մեր կարծիքով, Հայաստանի պայմաններում հնարավոր է ստեղծել 7-8 տեխնոլոգիական ինկուբատորների ցանց, որոնցում մանր և միջին բարձրտեխնոլոգիական ընկերությունները որակյալ ղեկավարների խմբի կողմից կկարողանան նախաձեռնողական արժեքավոր օժանդակություն ստանալ, որտեղ նաև մատչելի կլինի մասնագիտական ուսուցումը նորությունների առևտրականացման բնագավառում, միաժամանակ, մատչելի կլինի անհրաժեշտ տեղեկատվությունը բիզնեսի վարման վերաբերյալ:

Ինկուբատորի օժանդակությամբ հնարավորություն է ստեղծվում նորաստեղծ ու աճի մեծ ներուժ ունեցող ընկերությանը՝ անհամեմատ ավելի նվազ արգելքներով անցնել զարգացման առաջին մի քանի փուլերով: Միայն այս կերպ է հնարավոր ապահովել ներդրված կապիտալի նկատմամբ նորմալ շահույթի ստացումը. այլապես, բիզնեսի այս խիստ բարձրռիսկային տեսակը գրավիչ լինել չի կարող [9]: Դա է վկայում բազմաթիվ երկրների փորձը (Իսրայել, Գերմանիա, ԱՄՆ, ճապոնիա և այլն):

Տեխնոլոգիական ինկուբատորի հիմնական գործառնությունները հետևյալն են. ա) ապահովել գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների և արդյունաբերական ձեռնարկությունների միջև եղած կապերը՝ նորարարություն պարունակող որևէ կոնկրետ ծրագրի առկայության դեպքում, բ) մատուցել նորարարական ձեռնարկությունների զարգացման օպտիմալ կառավարման գծով որակյալ ծառայություններ, հնարավոր դարձնել գիտական նորությունների առևտրականացման ճիշտ մարտավարության ընտրությունը, գ) կազմակերպել նորարարական նախագծի իրականացման նկատմամբ ամենօրյա համակողմանի մոնիտորինգ՝ ֆինանսների, հաշվապահության վարման, արտադրության, իրացման, գիտահետազոտական աշխատանքների գծով, դ) իրականացնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության որակյալ մասնագիտական խորհրդատվություն, ե) տրամադրել մարքեթինգային ծառայություններ, ինչպես նաև՝ որոշակի գիտահետազոտական աշխատանքների վարման նպատակային ռեսուրսներ, զ) դյուրամատչելի դարձնել ինչպես ֆինանսավորման կամ վարկավորման մասնավոր աղբյուրները (հանձինս բանկերի կամ վենչուրային հիմնադրամների), այնպես էլ ռազմավարական գործընկերների հետ կապերը, է) ապահովել անհրաժեշտ ուսուցմամբ ու գիտելիքներով, ինչը պակաս կարևոր չէ որևէ նորամուծային ծրագիր ձեռնարկելու տեսանկյունից, և այլն:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ինկուբատորները բավականին խիստ ընտրություն են անում՝ այս կամ այն նորարարական ծրագիր ունեցող ընկերությանը տարածք ու մնացյալ պայմանները

տրամադրելիս: Ընտրված ընկերությունը, որպես կանոն, ինկուբատորին է գիջում իր բաժնետոմսերի որոշակի մասը: Իհարկե, այն պնդումը, որ ինկուբատորում գործունեություն ծավալած յուրաքանչյուր ընկերություն իր ժամկետի ավարտին առևտրային առումով անպայման հաջողակ կլինի, փորձով չի հաստատվում [9, p. 11]: Հաշվի առնելով մեր պայմանները, Հայաստանում ստեղծված (և ստեղծվելիք) ինկուբատորները պետք է դրվեն արտոնյալ հարկային ռեժիմում. վեճիկության հիմնադրամների կողմից նորանվճարյին ծրագրերի ֆինանսավորումը նույնպես պետք է ազատվի հարկերից: Թերևս, միայն այս կերպ հնարավոր է շահագրգռել բազմամիլիարդ կապիտալներ տնօրինող եվրոպական և ամերիկյան վեճիկության հիմնադրամներին՝ մասնաճյուղեր բացել Հայաստանում ու այստեղ ակտիվ գործունեություն ծավալել:

Զարգացած երկրներում նորանվճարյունների գործընթացի պետական լծակներով անուղղակի խթանման հարուստ փորձ է կուտակված, որի մանրակրկիտ ուսումնասիրությունն ու դրանից բխող շահեկան տարրերի կիրառությունը գիտական լուրջ ներուժ ունեցող երկրներին, այդ թվում և Հայաստանին, թույլ կտա էապես բարելավել ճգնաժամային վիճակում գտնվող գիտական և նորարարական համակարգերի ֆունկցիոնալ վիճակն ու բարձրացնել դրանց մրցակցային կարողականությունը:

Գրեթե բոլոր զարգացած երկրներում (ԱՄՆ, Եվրամիություն, ճապոնիա) կապիտալ ներդրումների կառուցվածքում գիտահետազոտական և փորձնական ստորակտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) ծախսերի նկատմամբ ամորտիզացիայի 100% նորմատիվ է կիրառվում [10]: Սակայն, այդ երկրներում կիրառվող ամորտիզացիայի ժամկետները տարբեր են: Այսպես, ԱՄՆ-ում, լաբորատոր սարքավորումների և հետազոտական տեխնիկայի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 3 տարի, իսկ շենքերի և շինությունների մաշվածության համար սահմանված է 15 տարի: ԳԴՀ-ում հետազոտական տեխնիկայի և սարքավորումների մասով ծախսերի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է տարեկան արժեքի 30%-ը համամասնորեն, իսկ շինությունների մասով՝ նրանց արժեքի 4%-ը համամասնորեն [10, c. 71]:

ԳՀՓԿԱ ծախսերի ամորտիզացիայի ճիշտ նույնպիսի ռեժիմ է սահմանված նաև Շվեդիայում: Իտալիայում և Ավստրիայում, ի տարբերություն նշված երկրների, կիրառում են ԳՀՓԿԱ ծախսերի արագացված ամորտիզացիայի տարբերակը, մինչդեռ Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում, Կանադայում և Դանիայում գործում է 100% ամորտիզացիայի եղանակը: Որոշ երկրներում (Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեյցարիա), ԳՀՓԿԱ ծախսերի ամորտիզացիայի գործընթացը դիտ-

վում է իբրև ներդրում, և հարկային ռեժիմը գործում է ելնելով ներդրումային օրենսդրությունից [10, c. 74]:

ՀՀ օրենսդրության մեջ ԳՀՓԿԱ ծախսերի հարկման ռեժիմը, կարելի է ասել, բավականին հավասարակշռված է: Այսպես, հաշվողական և համակարգչային տեխնիկայի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է մեկ տարի: Իսկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է հարկատուն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Իսկ եթե այդ ժամկետները ստույգ որոշելը անհնար է, ապա ամորտիզացիոն ժամկետ է սահմանվում 10 տարի, սակայն՝ հարկատուի գործունեության ժամկետից ոչ ավելի [11]: Իսկ հարկվող շահույթը որոշելիս՝ ԳՀՓԿԱ ծախսերը ամբողջությամբ հանվում են համախառն եկամտից [11, էջ 28]:

Ձարգացած երկրների մեծ մասը ԳՀՓԿԱ ոլորտը դիտում է իբրև արտոնյալ հարկման ենթակա բնագավառ, ու, այդ պատճառով, հարկային արտոնություններ են սահմանվել՝ տարբեր ժամկետներով: Այսպես, ԱՄՆ-ում, նայած նորամուծության բնույթին ու նշանակությունը, հարկային արտոնությունները կարող են գործել 3-15 տարի, Նորվեգիայում՝ 10 տարի, Նիդերլանդներում՝ 8 տարի, Կանադայում՝ 7 տարի, ԳՂՀ-ում՝ մինչև 5 տարի, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում, Դանիայում, Բելգիայում և Ավստրիայում՝ 5 տարի, Շվեյցարիայում՝ 2 տարի: Միևնույն ժամանակ, ճապոնիայում, Իտալիայում կամ Ավստրալիայում նման արտոնություն սահմանված չէ [10, c. 62]: ՀՀ օրենսդրությունը առայժմ նման դրույթ չի պարունակում: Ըստ երևույթին, այդպիսին հնարվոր կլինի սահմանել միայն «Նորամուծային քաղաքականության մասին ՀՀ օրենքի» ընդունումից հետո միայն, երբ նորամուծությունը, որպես այդպիսին, կսահմանվի օրենսդրորեն:

Որոշ երկրներ իրենց հարկային օրենսդրություններում նախատեսել են նաև, այսպես կոչված, հարկային վարկեր (զեղչեր), հիմնականում՝ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գծով: Ֆրանսիայում սահմանված է մինչև 50% զեղչ, Կանադայում, ԱՄՆ-ում և ճապոնիայում սահմանված է 20%, Իսպանիայում՝ 15%, Նիդերլանդներում՝ 12,5-25%, իսկ մնացած երկրներում նման զեղչեր նախատեսված չեն: ԱՄՆ-ում ԳՀՓԿԱ բնագավառին տրվող հարկային վարկը (զեղչը) հավելաճային է, այսինքն՝ որքան ավելանում են հետազոտությունների և մշակումների ծախսերը, այնքան ավելի մեծ գումարներ են մնում նորամուծությունների բնագավառի գործարարի մոտ: Հարկային նման մեխանիզմ կիրառվում է նաև ճապոնիայում, Ֆրանսիայում ու Իսպանիայում [3, p. 8]:

Առավել հետաքրքիր և ուսանելի է զարգացած երկրների կառավարությունների կողմից հարկային քաղաքականության լծակների միջոցով ԳՀՓԿԱ բնագավառի զարգացման խրախուսումը: Մասնավոր-

րապես, ԱՄՆ-ում գործում է գիտահետազոտական և փորձնական-տրուկտորական աշխատանքների խթանման տրամաբանորեն հիմնավորված ու մանրամասնեցված կուռ համակարգ: Այսպես, այդ երկրի կորպորացիաների ԳՖԿԱ տարեկան ծախսերի հավելաճի 20%-ը հանվում է իբրև նվազեցում, ինչը, բնականաբար, ավելացնում է շահույթը, միևնույն ժամանակ, ընկերությունն այդ մասով շահութահարկով չի հարկվում:

Ընդ որում՝ տնտեսության մասնավոր հատվածի նկատմամբ օրենքով որոշակի նորմատիվներ են սահմանված, որոնցով կարգավորվում են հարկային արտոնությունների չափերը: Այսպես, օրենսդրորեն ԳՖԿԱ պետական օժանդակության (պայմանագրեր՝ գումարած պետական լրավճարներ) ծավալը պետք է կազմի մասնավոր ընկերությունների նմանաբնույթ ծախսերի 1/4-ից ոչ ավելին, ավելի ստույգ՝ 24.8%-ը: Օրենքով սահմանված է նաև մասնավոր հատվածի ԳՖԿԱ ծախսերի նկատմամբ տրամադրվող հարկային արտոնությունների ծավալի հարաբերակցության չափը (0.8%): Այլ կերպ՝ ԱՄՆ-ում հարկային արտոնությունների անուղղակի ծավալը կազմում է մասնավոր հատվածի ԳՖԿԱ բնագավառին պետական ուղղակի ֆինանսական օժանդակության մոտավորապես 3% [3, p. 87]:

Ճապոնիայում ևս գործում է ԳՖԿԱ բնագավառի հարկային խթանների ճկուն համակարգ, սակայն որոշ տարբերություններով: Այս երկրում հարկային արտոնությունը կազմում է խոշոր կորպորացիաների ԳՖԿԱ տարեկան ծախսերի հավելաճի 20%-ը, ինչը, իբրև նվազեցում, վերստին հանվում է ընդհանուր կապիտալ ծախսերից: Սակայն, այստեղ նվազագույն չեն է սահմանված. այդ գումարը չպետք է գերազանցի ընկերության հարկային պարտավորությունների 10%-ից: Այդ հարկային օժանդակությունը վերստին հանվում է հարկվող շահույթից [3, p. 92]:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, Ճապոնիայում նորամուծությունների պետական խթանման համակարգը տարբերացված է ըստ բիզնեսի չափերի: Փոքր ու միջին ձեռնարկությունների պարագայում, իբրև ընդհանուր հասույթի նվազեցում դիտվում է ոչ թե ԳՖԿԱ ծախսերի հավելաճի որոշակի մասը, այլ բուն այդ ծախսերի 6%-ը, որը, սակայն, չպետք է գերազանցի ընդհանուր հարկային պարտավորությունների 15%-ը: Միևնույն ժամանակ, ի տարբերություն ԱՄՆ-ի, Ճապոնիայում մասնավոր ընկերությունների ԳՖԿԱ ծախսերի նկատմամբ ուղղակի պետական օժանդակության ծախսերը շատ փոքր են, ընդամենը՝ 1.4%: Ճապոնիայի տնտեսության մասնավոր հատվածի ԳՖԿԱ ծախսերի նկատմամբ պետության տրամադրած հարկային արտոնությունների ծավալի հարաբերակցության՝ օրենքով սահմանված չափը նույնն է՝

0.8%: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ճապոնիայում գերապատվությունը տալիս են խթանման անուղղակի մեթոդներին՝ շեշտը դնելով հարկային արտոնությունների վրա [3, p. 95]:

Ազգային նորարարական համակարգի ձևավորման ենթատեքստում կարևորագույն խնդիր է գիտության բնագավառի վերափոխումը: Առայժմ պետությունը, վճարելով որոշակի հետազոտությունների իրականացման դիմաց, ըստ էության, դեռևս իր համար չի որոշարկել գիտության այն ոլորտները, որոնք պետք է գերակա հանդիսանան և համապատասխանեն տնտեսական ռազմավարության պահանջներին: Այս տեսանկյունից, պետությունը խնդիրներ ունի ոչ միայն հիմնարար գիտության ֆինանսավորման համակարգը կարգաբերելու, այլև կիրառական գիտության բնագավառին ուղղակի և անուղղակի օժանդակություն ապահովելու հարցում:

Այս խնդրադրումներից ելնելով՝ պետական գիտատեխնիկական քաղաքականության գերակա ուղղությունները պետք է լինեն.

1. Գիտության բնագավառի պետական ֆինանսավորման հիմնական ուղղությունների հստակեցումը: Այս առումով, բազմաթիվ այլընտրանքային տարբերակներից հարկ կլինի բացառել նրանք, որոնց շարունակության համար պետությունը նման միջոցներ չունի: Ասենք, իմաստ ունի⁶, արդյոք, շարունակել ֆինանսավորել այն գիտահետազոտական հաստատությունները, որոնք լուրջ գիտական արդյունքներ չեն արձանագրում, և նման ֆինանսավորման նպատակը սոսկ այդ ինստիտուտների ենթակառուցվածքները պահպանելն է: Նման հետազոտական կառույցները անհրաժեշտ է միավորել բուհերի հետ:

2. Գիտության ոլորտի թեմատիկ ֆինանսավորման համակարգի բարելավում, այն հաշվով, որպեսզի միջոցները հատկացվեն բացառապես որակյալ ու անկախ փորձաքննության հիման վրա: Մշակել ու օրենքով ամրագրել փորձաքննության հիմնական պահանջները, միջոցները հատկացնել բացառապես բաց ու հրապարակային մրցույթների հիման վրա, միևնույն ժամանակ, ապահովել հետազոտությունների արդյունքների հրապարակային փորձաքննությունը:

3. Պետական բյուջետային միջոցների հատկացումն իրականացնել հատուկ այդ նպատակով ստեղծվելիք հիմնադրամների միջոցով (հիմնարար գիտության ֆինանսավորման, փոքր ու միջին նորարարական ընկերությունների օժանդակության հիմնադրամ և այլն): Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական օժանդակության նպատակով ներկայում ձևավորվող ենթակառուցվածքի գլխավոր խնդիրը պետք է լինի հենց նորարարական ու աճի մեծ պոտենցիալ ունեցող ընկերություններին համապատասխան միջոցների և խորհրդատվությունների տրամադրումը: Մեր կարծիքով, բոլորովին իմաստ չունի, որ

պետությունը ուղղակիորեն օժանդակի որևէ փոքր բիզնեսի, այլ՝ պետք է սատարի բացառապես այն ընկերություններին, որոնց բիզնես-ծրագրերը հիմնված են բարձր ռիսկեր ենթադրող նորամուծությունների վրա:

4. Գիտահետազոտական նախագծերի ֆինանսավորման այնպիսի սխեմաների կիրառումը, որոնք կնպաստեն հետազոտական կառույցների, կրթական հաստատությունների, ինչպես նաև մասնավոր տնտեսական կառույցների ինտեգրմանը: Այդ նպատակով, կարելի է ներդնել *համաֆինանսավորման* սկզբունքը, երբ բոլոր շահագրգիռ կողմերը մասնակցում են տվյալ ծրագրի իրագործմանը: Նման մոտեցումը թույլ կտա անցկացվող հետազոտությունները դարձնել ավելի իրատեսական ու նպատակային, այլ կերպ՝ հետազոտությունների նկատմամբ պահանջարկը ձևավորել հետադարձ կապի սկզբունքի հիման վրա: Կարելի է ասել, որ այս խնդիրը ամենևին էլ զուտ հայկական կամ մույնիսկ անցումային երկրներին բնորոշ երևույթ չէ: Այն բնորոշ է նաև զարգացած արդյունաբերական երկրներին [12]: Համաշխարհային բանկի փորձագետների վերջերս ներկայացրած հաշվետվության մեջ շեշտվում է, որ ընկերությունները հաճախ տեսնում են, որ ինստիտուտների և համալսարանների հետազոտությունները չեն համապատասխանում իրենց երկարաժամկետ և մույնիսկ միջնաժամկետ խնդիրներին: Մյուս կողմից, գիտության պետական ֆինանսավորման քաղաքականությունը հեռու է արդյունաբերության զարգացման իրական պահանջները հաշվի առնելու պահանջից [12, p. 46]:

5. Պետական բյուջետային ֆինանսավորման արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով, կարելի է կիրառել նաև *պայմանական ֆինանսավորման* սխեման, երբ գիտահետազոտական ինստիտուտը կամ համալսարանը պետական դրամաշնորհներ են ստանում հետազոտական նպատակների համար՝ դրանք որևէ մասնավոր ընկերության (կամ ընկերությունների խմբի) համաֆինանսավորման զուգակցմամբ իրագործելու պայմանով: Այս հանգամանքը կնպաստի նաև նոր ձևավորվող տնտեսության մասնավոր հատվածի կողմից գիտահետազոտական նպատակներին ուղղվող միջոցների ավելացմանը և, միաժամանակ, կիսբանի մեր ձեռնարկություններին՝ գնելու հայրենական մշակողների պատրաստած տեխնոլոգիական նորույթները:

Աղբյուրներ և գրականություն

1. Инновационная экономика. /Под ред. А. А. Дынкина, Н. И. Ивановой, М.: Наука, 2001.
2. Создание институциональных основ рыночной экономики. Доклад о мировом развитии 2002. Всемирный банк. Москва, с. 238.
3. Innovation and Technology Transfer. Special Edition. Published by the EC, Nov. 2000.
4. Helsinki Seminar on Innovation Policy and the Valorisation of Science and Technology in Russia, March 1-2, 2001: <http://www.oecd.org/dsti/sti/>
5. Հ. Լ. Սարգսյան. «Խնդիրը վերելքի ռազմավարությունն է». «Օրրան», 3 դեկտեմբերի, 2002թ.:
6. www.mshak.am/Russian/index.html
7. «Կառավարում» ամսագիր, 2000թ. N. 3, էջ 29-34:
8. «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» ամսագիր, 2001թ. N. 1, էջ 37-40:
9. Technology Innovation Centers: A Guide to Principles and Best Practices, Report prepared for the US Department of Commerce by Claggett Wolfe Associates, December 1999, p. 1.
10. Л. И. Леонтьев. О формах и методах стимулирования инновационной деятельности.- М., РИЦ РАН, 2001, с. 58.
11. «Շահութահարկի մասին ՀՀ օրենքը», Հարկեր, տուրքեր և վճարներ, առ 1 հունվարի 2003թ., էջ 26-27:
12. Korea: How Firms Use Knowledge, Part A: Firm-Level Innovation in the Korean Economy, Unpublished World Bank Manuscript, 2002, p. 48.

Սեպտեմբերի 12, 2003թ.

СТРАТЕГИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ В КОНТЕКСТЕ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ СТРАНЫ

Атом Маргарян

Резюме

В работе затрагивается наиболее актуальная задача экономического развития РА, конкретно повышение конкурентноспособности страны в долгосрочной перспективе. Обосновывается центральный тезис статьи, согласно которому основной потенциал реконструкции близок к исчерпанию. Экономическое развитие Республики требует формирования конкурентноспособности на качественно новом уровне. В качестве механизма решения этой задачи предлагается внедрение национальной системы инновации, основной задачей которой должно стать обеспечение пере-

хода в ближайшее десятилетие от (полу) индустриальной экономики к наукоемкой или информационной. В работе предлагаются варианты предложения по перевооружению и развитию научно-технического и технологического потенциала, внедрению инноваций и повышению коммерческой конкурентно-способности инфраструктур, а также по формированию макро-экономической политики, поддерживающей инновационную деятельность.